

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԵՎ ԼՈՒՍԱՖՈՐԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ՀՀ ԼՄՎՔ-ՊԸԾՁԲ-17/48>>

ք. Վանաձոր

<<14>> ապրիլի 2017թ.

<<Վանաձորի համայնքապետարան>>, ի դեմս Ս. Ասլանյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Կ և Ա Մոնտաժին>> ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Հովհաննիսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Վանաձոր համայնքի ճանապարհային նշանների և լուսաֆորային օբյեկտների սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

#### 2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության չորս օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 4715465 (չորս միլիոն յոթ հարյուր տասնհինգ հազար չորս հարյուր վաթսուհինգ) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց

ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25-ը դեկտեմբերի 2017թ.:

#### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով<sup>1</sup>:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

#### 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌԻՇԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

#### 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ

<sup>1</sup> Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:

վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է [www.gnumner.am](http://www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2 , N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

<<Վանաձորի համայնքապետարան>>

ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22

Կենտրոնական գանձապետարան

ՀՎՀՀ 06901936

Հ/Հ 900232986027

Ս. Ասլանյան  
(ստորագրություն)



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

<<Կ և Ա Մոնտաժին>> ՓԲԸ

Ք. Վանաձոր, Վարդանանց 2ա

ՀՀ 2050222007241001

ՀՎՀՀ 06907967

Ինեկորանկ ՓԲԸ



Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր	
<p>Վանաձոր համայնքի փողոցներում և խաչմերուկներում տեղադրված ճանապարհային նշանների և լուսաֆորային օբյեկտների սպասարկումը /2017թ. 7 ամսվա համար/`</p> <ul style="list-style-type: none"> <li>❖ Լուսացույցների էլ. լամպերի փոխում (շիկացման լամպ 60վտ) -2258 /երկու հազար երկու հարյուր հիսունութ/ հատ</li> <li>❖ Լուսացույցների լվացում (տնտեսական օճառով և կաուստիկ սողաով)- 95.0/իննսունհինգ/ մ<sup>2</sup></li> <li>❖ ՈՒԿ-2 կարգավորիչի վերանորոգում – 13/տասներեք/ հատ</li> <li>❖ Ճանապարհի նշանների ապամոնտաժում, վերանորոգում և մոնտաժում - 24/քսանչորս/ հատ</li> <li>❖ Պողպատե հենասյան ապամոնտաժում - 7 /յոթ/ հատ</li> <li>❖ Պողպատե հենասյան ուղղում և մոնտաժում- 7 /յոթ/ հատ</li> <li>❖ Ճանապարհի նշանների հենասյուների ներկում (յուղաներկ - 24.4կգ, տր. ներկ - 0.2կգ, օլիֆ - 2.7կգ) – 54.0/ հիսունչորս/ մ<sup>2</sup></li> <li>❖ Ճանապարհի նշանների լվացում/50x0.5/=25 մ<sup>2</sup>- 25.0/քսանհինգ/ մ<sup>2</sup></li> <li>❖ Փողոցային երթևեկության նշանների պատրաստում և տեղադրում- 2/երկու/ հատ(պողպատե խողովակ <math>\Phi 76 \times 3.5 - 3.5</math>զմ, երթևեկության նշաններ – 1 հատ, բետոն /մ-100/ – 0.062մ<sup>3</sup>)</li> </ul>	
Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	ավարտը
01.06.2017թ	31.12.2017թ.

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**  
 <<Վանաձորի համայնքապետարան>>  
 ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22  
 Կենտրոնական գանձապետարան  
 ՀՎՀՀ 06901936  
 Հ/Հ 900232986027

  
 -----Ս. Ասլանյան  
 (ստորագրություն)  


**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**  
 <<Կ և Ա Մոնտաժշին>> ՓԲԸ  
 ք. Վանաձոր, Վարդանանց 2ա  
 ՀՀ 2050222007241001  
 ՀՎՀՀ 06907967  
 Ինեկոբանկ ՓԲԸ

  
 -----Ս. Հովհաննիսյան  
 (ստորագրություն)  


**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Վանաձոր համայնքի ճանապարհային նշանների և լուսաֆորայի և օբյեկտների սպասարկման ծառայությունների մատուցում						990000	1556000	2216000	2829000	3442000	4100000	4715465	4715465

\* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**Պ Ա Տ Վ Ի Դ Ա Տ ՈՒ**  
 <<Վանաձորի համայնքապետարան>>  
 ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22  
 Կենտրոնական գանձապետարան  
 ՀՎՀՀ 06901936  
 Հ/Հ 900232986027

-----Մ. Ասլանյան  
 (ստորագրություն)



**Կ Ա Տ Ա Դ Ո Ղ**  
 <<Կ և Ա Մոնտաժին>> ՓԲԸ  
 ք. Վանաձոր, Վարդանանց 2ա  
 ՀՀ 2050222007241001  
 ՀՎՀՀ 06907967  
 Ինեկորանկ ՓԲԸ

-----Ս. Հովհաննիսյան  
 (ստորագրություն)



**Ծ Ա Վ Ա Լ Ա Թ Ե Ր Թ**

Վանաձոր համայնքի ճանապարհային նշանների և լուսաֆորային օբյեկտների սպասարկում  
 /2017թ. 7 ամսվա համար/

ՀՀ դրամ

Հ/հ	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը	Արժեքը
1.	Լուսացույցների էլ. լամպերի փոխում /60վտ/	հատ	2258	258	582564
2.	Լուսացույցների լվացում	մ <sup>2</sup>	95.0	94	8930
3.	ՈՒԿ-2 կարգավորիչի վերանորոգում	հատ	13	6000	78000
4.	Ճանապարհի նշանների ապամոնտաժում, վերանորոգում և մոնտաժում	հատ	24	14380	345150
5.	Պողպատե հենասյան ապամոնտաժում	հատ	7	4930	34510
6.	Պողպատե հենասյան ուղղում և մոնտաժում	հատ	7	9910	69370
7.	Ճանապարհի նշանների հենասյուների ներկում	100մ <sup>2</sup>	0.540	68170	36812
8.	Ճանապարհի նշանների լվացում/50x0.5/-25 մ <sup>2</sup>	մ <sup>2</sup>	25.0	50	1250
9.	Փողոցային երթևեկության նշանների պատրաստում և տեղադրում	հատ	2	44710	89420
	Ընդամենը՝				1245976
	Վերադիր ծախսեր 13.3%				165715
	Ընդամենը՝				1411691
	Շահույթ 11%				155286
	Ընդամենը՝				1566977
	էլ. էներգիայի ծախս /ցերեկ/8x16x0.075x44.98x210x25	կվտ	50400	44.98	2266992
	էլ. էներգիայի ծախս/գիշեր/8x8x0.075x34.98x210x25	կվտ	25200	34.98	881436
	ընդամենը				3148488
	ԸՆԴՀԱՆՈՒՐԸ՝				4715465

**Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ ՈՒ**  
 <<Վանաձորի համայնքապետարան>>  
 ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22  
 Կենտրոնական գանձապետարան  
 ՀՎՀՀ 06901936  
 Հ/Հ 900232986027

Ս. Ասլանյան  
 (ստորագրություն)



**Կ Ա Տ Ա Բ Ո Ղ**  
 <<Կ և Ա Մոնտաժին>> ՓԲԸ  
 ք. Վանաձոր, Վարդանանց 2ա  
 ՀՀ 2050222007241001  
 ՀՎՀՀ 06907967  
 Ինտեկտրանկ ՓԲԸ

Ս. Հովհաննիսյան  
 (ստորագրություն)





Պայմանագրի կողմ  
<<Կ և Ա Մոնտաժին>> ՓԲԸ  
Ք. Վանաձոր, Վարդանանց 2ա  
ՀՀ 2050222007241001  
ՀՎՀՀ 06907967  
Ինեկոբանկ ՓԲԸ

Պատվիրատու  
<<Վանաձորի համայնքապետարան>>  
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22  
Կենտրոնական գանձապետարան  
ՀՎՀՀ 06901936  
Հ/Հ 900232986027

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

< >> 2017 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Վանաձոր համայնքի ճանապարհային նշանների և լուսաֆորային օբյեկտների սպասարկում

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<14>>ապրիլի 2017թ.

Պայմանագրի համարը՝ N<<ՀՀ ԼՄՎՔ-ՊԸԾՁԲ-17/48>>

Պատվիրատուն ի դեմս պատասխանատուի ստորաբաժանման ղեկավար Հայկ Հովսեփյանի և Պայմանագրի կողմը՝ ի դեմս «Կ և Ա Մոնտաժին» ՓԲԸ-ի տնօրեն Հայկ Հովսեփյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «\_\_\_\_\_» «\_\_\_\_\_» 2017թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N \_\_\_\_\_ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորն նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.  
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Մատուցված ծառայությունների								
N	անվանումը	տեխնիկական և բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են Օտարությունը հանձնեց

ազգանուն, անուն

ազգանուն, անուն

Պ Ա Տ Վ Ի Դ Ա Տ ՈՒ

Կ Ա Տ Ա Բ Ո Ղ

<<Վանաձորի համայնքապետարան>>

<<Կ և Ա Մոնտաժին>> ՓԲԸ

ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22

Ք. Վանաձոր, Վարդանանց 2ա

Կենտրոնական գանձապետարան

ՀՀ 2050222007241001

ՀՎՀՀ 06901936

ՀՎՀՀ 06907967

Հ/Հ 900232986027

Ինեկոբանկ ՓԲԸ

Ս. Ասլանյան  
(ստորագրություն)  
Վ.Տ.

Ս. Հովհաննիսյան  
(ստորագրություն)  
Վ.Տ.  
«Կ և Ա ՄՈՆՏԱՋԻՆ» ՓԲԸ  
«К Е В А МОНТАЖИНЫ»  
06907967

**ԱԿՏ N**

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ Վանաձորի համայնքապետարան-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Կ և Ա Մոնտաժին» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կատարող) 20 թ. ----- -ին կնքված N<<ՀՀ ԼՄՎՔ-ՊԸՕՁԲ-17/48>> գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2017թ. ապրիլի- 14 -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

<p><b>Հանձնեց</b></p> <p>ներկայացուցիչ՝</p>  <p>_____</p> <p style="text-align: center;">ազգանուն, անուն</p> <p>_____</p> <p style="text-align: center;">ստորագրություն</p>	<p><b>Ընդունեց</b></p> <p>հայտը նախագծած</p>  <p>_____</p> <p style="text-align: center;">ազգանուն, անուն</p> <p>_____</p> <p style="text-align: center;">ստորագրություն</p>
---	--

**Պ Ա Տ Վ Ի Ը Ա Տ ՈՒ**  
 <<Վանաձորի համայնքապետարան>>  
 ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22  
 Կենտրոնական գանձապետարան  
 ՀՎՀՀ 06901936  
 Հ/Հ 900232986027

-----Մ. Ասլանյան  
 (ստորագրություն)



**Կ Ա Տ Ա Ը Ո Ղ**  
 <<Կ և Ա Մոնտաժին>> ՓԲԸ  
 ք. Վանաձոր, Վարդանանց 2ա  
 ՀՀ 2050222007241001  
 ՀՎՀՀ 06907967  
 Ինեկորանկ ՓԲԸ

-----Մ. Հովհաննիսյան  
 (ստորագրություն)

